



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՍՊԻՏԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետություն, Լոռու մարզ, Սպիտակի համայնքապետարան, Շահումյան 7, 1804,
Հեռ: (0-255) 2-25-00, Ֆաքս: (0-255) 2-25-97, էլ. փոստ: municipalityspitak@gmail.com

ՈՐՈՇՈՒՄ

«29» փետրվարի 2024թ. № 230

ՍՊԻՏԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ 2023 ԹՎԱԿԱՆԻ ՆՈՅԵՄԲԵՐԻ
27-Ի ԹԻՎ 1156 ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ
ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 33-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետով, հաշվի առնելով, որ Ռուզաննա Գագիկի Գրիգորյանին սեփականության իրավունքով պատկանող 06-006-0276-0007-001 կադաստրային ծածկագրով շինության կադաստրային արժեքի վերահաշվարկի արդյունքում նվազել է 2021 և 2022 թվականներին հաշվարկված գույքահարկը, հիմք ընդունելով տեղական հարկի պարտավորությունների վերաբերյալ 2024 թվականի փետրվարի 29-ի թիվ 29, թիվ 30 և թիվ 31 տեղեկանքները՝ **որոշում եմ**.

1. Սպիտակ համայնքի ղեկավարի 2023 թվականի նոյեմբերի 27-ի «Ռուզաննա Գագիկի Գրիգորյանին գույքահարկի գումարի գանձման պահանջ ներկայացնելու մասին» թիվ 1156 որոշման 1-ին կետը շարադրել նոր խմբագրությամբ.

«1. Ռուզաննա Գագիկի Գրիգորյանից հօգուտ Սպիտակ համայնքի գանձել **չորս հարյուր տասնյոթ հազար ութ հարյուր երեսունութե** ՀՀ դրամ, որից ապառք՝ **երեք հարյուր տասնչորս հազար չորս հարյուր ութսունմեկ** ՀՀ դրամ և օրենքով սահմանված ժամկետում չվճարելու արդյունքում առաջացած տույժ՝ **հարյուր երեք հազար երեք հարյուր հիսունյոթ** ՀՀ դրամ»:

2. Սույն որոշման մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով եռօրյա ժամկետում իրազեկել Ռուզաննա Գագիկի Գրիգորյանին:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում վարչական վարույթի մասնակցին Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով և ժամկետում իրազեկելուն հաջորդող օրվանից:

4. Սույն որոշումը կարող է վարչական կարգով բողոքարկվել Սպիտակ համայնքի ղեկավարին կամ դատական կարգով՝ ուժի մեջ մտնելու օրվանից երկու ամսվա ընթացքում:

5. Սույն որոշման պահանջը չկատարելու դեպքում, այն ենթակա է կատարման «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 88-րդ հոդվածով սահմանված կարգով՝ անբողոքարկելի դառնալուց հետո եռամսյա ժամկետում:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝  Բ. ՆԻԿՈՂՈՍՅԱՆ



2024թ. փետրվարի 29
ք. Սպիտակ